

20 JUL 2010

614, 447
h-61

ԻՆՉ ԵՆ ԾԱՂԿԻ ԴԵՄ
ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ,
ԻՆՉՈՒ ՅԵՆ ՆՐԱՆՔ
ՊԱՐՏԱԴԻՐ

ՔԻՆԸ 10 ԿՈՊ.

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1940

ՔԱՐԵՑԵՔ ՎԱՐԱԿԻՋ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

ԻՆՋ ԵՆ ԾԱՂԿԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՈՒ ՅԵՆ ՆՐԱՆՔ ՊԱՐՏԱԴԻՐ

Բնական ծաղիկը հնագույն հիվանդություններից մեկն է: Ծաղկով հիվանդանալու մասին գիտելիք մինչև մեր ժամանակները մի քանի հազար տարի առաջ: 17-րդ և 18-րդ դարերում Յեվրոպայում ամեն տարի ծաղկից մինչև 400 հազար մարդ էր մեռնում, հիվանդացածների դեպքի մասը կուրանում էր և շատացնում հաջմանդամների թիվը: Ծաղկին իրավացիորեն մեծ չարիք էյին համարում: Ծաղկի դեմ պայքարել չգիտելին և նրան ընդունում էյին վարպետ ինչ վոր անխուսափելի մի բան: Բայց արդեն 18-րդ դարի վերջին նկատվեց, վոր ծաղկի համաճարակի (մարդկանց մասսայականորեն հիվանդանալու) ժամանակ ինչ-վոր բանով հիվանդանում են նաև կովերը: Կովերի կուրծի վրա յերևան էյին դալիս մարդկային ծաղիկ հիշեցնող պալարներ: Հիվանդ կովերին կթող կանանց ձեռների վրա նույնպես հաճախ յերեվան էյին դալիս ծաղկի բշտիկների նման բշտիկներ: Ժողովրդի մեջ գոյություն ունեք նույնիսկ այն անհավատությունը, թե այն մարդիկ, վորոնց ձեռների վրա ծաղկի համաճարակի ժամանակ այդպիսի բշտիկներ կան, բնական ծաղկով այլևս չեն հիվանդանում: Անգլիական բժիշկ Ջենները մի քանի տարվա ընթացքում ստուգեց այդ անհավատությունը և համոզվեց նրա ճշտության մեջ: Այդ բանը նրա մեջ միտք հղացրեց նախապահպանել մարդկանց բնական ծաղկից, արհեստական կերպով վարակելով նրանց կովի ծաղկով, այսինքն պատվաստումներ անել:

1796 թ. մայիսին Ջեններն իր դիտողություններն ստուգեց փորձով: Նա յերեխայի թևի մաշկի վրա արած կտրվածքի մակերեսի մեջ ներշփեց կովից վարակված կթող կնոջ ձեռների բշտիկների պարունակությունը: Յերեխայի թևի վրա, ինչպես վոր կթող կնոջ մոտ, բշտիկներ առաջացան: Մի քանի օրից հետո, յերբ կեղևներն ընկան, Ջեններն այդ յերեխային

վարակեց մարդկային բնական ծաղկով: Ու յերեխան չհիվանդացավ: Հետագա դիտողությունները ցույց տվին, վոր նա անդգայունակ դարձավ ծաղկի նկատմամբ: Ջենների հանճարեղ դյուտը տարածվեց ամբողջ աշխարհում: Մարդը ձեռք բերեց մի ուժեղ պենը ծաղկի դեմ—պատվաստումները: Ջենների ժամանակից սկսած բարելավվեց պատվաստման նյութը պատրաստելու տեխնիկան, բայց պատվաստման ելությունը մնաց նախկինը. կովի ծաղկով վարակվելը նախապահպանում է բնական ծաղկով հիվանդանալուց:

Այն յերկրում, վորտեղ պարտադիր ծաղկապատվաստում է մտցրած, բնական ծաղկով հիվանդանալն անհետացել է, կամ յեղակի բնույթ է կրում: Իսկ այնտեղ, վորտեղ ամբողջ բնակչությունը ամբողջովին չի ընդգրկված պատվաստումներով, ծաղկով հիվանդանալը նշանակալի թվերով է արտահայտվում: Այդպես, օրինակ, 1936 թվին ԱՄՆ-ում յեղել է ծաղկով հիվանդանալու 7918 դեպք, այն ժամանակ, յերբ խորհրդային Միության մեջ ծաղիկը լիովին վերացված է: Մեր յերկրն այդ դրություն հասավ նրանով, վոր 1919 թվից մեզ մոտ պարտադիր ծաղկապատվաստում է մտցրած: Այդ դեկրետը ստորագրվել է Վլադիմիր Իլյիչ Լենինի կողմից:

Ծաղկի դեմ պատվաստման պաշտպանական ազդեցությունը ժամանակի ընթացքում թուլանում է: Այդ պատճառով անում են կրկնվող պատվաստումներ: ԽՍՀՄ-ում սահմանված են պատվաստումների հետևյալ ժամկետները. առաջինը— յերեխայի կյանքի 1 տարվա ընթացքում, յերկրորդը— 4-5 տարեկան ժամանակ, յերրորդը— 10-11 տարեկան և չորրորդը— 19-21 տարեկան հասակում:

Պատվաստելուց առաջ բուժաշխատողը քննում է պատվաստվողին և յեթե նա ստող է, պատվաստում է նրան: Չորրորդ օրը թեթևակի կտրած տղում գոյանում է կարմրավուն բարձրացում, վոր այնուհետև վեր է ածվում թարախ պարունակող

840
111



բշտիկի, այսպես կոչված ծաղկաբշտիկի: Յեթե ծաղկաբշտիկ կա, նշանակում է ծաղիկը բլունել է, պատվաստվել է: 10-11-րդ սրբ բշտիկը չորանում է, գոյանում է մուգ դույնի կեղեվ, վորը մի քանի օրից հետո ընկնում է: Ծխողկաբշտիկի տեղը սպի յե մնում: Սովորաբար ծաղիկը պատվաստելուց հետո ծաղկաբշտիկի գոյանալու հետ բարձրանում է ջերմաստիճանը, մանավանդ առաջին պատվաստման ժամանակ: Կրկնվող պատվաստումները, վորպես կանոն, համարյա ջերմաստիճանի բարձրացում չեն առաջացնում: Կրկնվող պատվաստումների ժամանակ ծաղկաբշտիկների գոյացումն ազելի արագ է կատարվում և ամբողջ պրոցեսը սովորաբար վերջանում է 7-8-րդ սրբ:

Կրկնվող պատվաստումներից հետո փոքրիկ ու սակավ նկատելի սպի յե ստացվում: Նկատի ունենալով, վոր ծաղկաբշտիկի զարգացման ժամկետն առաջին և կրկնվող պատվաստումների ժամանակ միանման չէ, ուստի և պատվաստումների արդյունքների ստուգումը կատարում են առաջին պատվաստման ժամանակ 7-8-րդ սրբ, իսկ կրկնվողների ժամանակ 4-5-րդ սրբ:

Յեթե ծծկեր յերեխայի ծաղիկը չի բունել, ապա մի ամսից հետո պետք է կրկնել պատվաստումը:

Վորպեսզի մեր յերկիրը ծաղկի տեսակետից պահպանի իր բարորությունը, անհրաժեշտ է պատվաստումներով ընդգրկել համապատասխան տարիքի վողջ բնակչությանը: Առանձնապես հարկավոր է պատվաստումներով ընդգրկել մինչև մեկ տարեկան բոլոր յերեխաներին:

Մնողներ: Չմոռանաք պատվաստել ձեր յերեխաներին ծաղիկի դեմ:

Թարգմ. Ավ. Շաթիրյան. Պատ. խմբ. բժ. Ս. Տեխ. խմբ. Ի. Վարդանյան. Սրբազրիչ Հ. Մալիալիտի լիազոր՝ Բ-1132. Պատ. 348. Տիրա

Հայպետհրատի տպարան, Յերևան, 1957

